

# DAILY

## ՕՐԱԹԵՐԻԹ



### Night and Day

### Գիշեր և ցերեկ

- ԶՊԱՐՏ ԲԱՍԿԸ
- ԿԱՊԵԼՈՎ ՍԵՐՈՒՆՂՆԵՐԻՆ
- ԷՐԵԱՂԻ. ԿԱՐՊԵՏԱՅ ՂԱՍ

էջ 3

- ԽԱՂԵՐ ԳԵՐԵԶՍԱՆՈՅՈՒՄ
- ՄԱՅԿԱՆ ԱՆՋՆԱՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ
- ԶԱԿԱՐԱՆԻ ԵՎ ՂՐԱՆՏԻ ՄԻՋԵՎ

էջ 4

### Մաջիդ Բարզեգար

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ էջ/p. 5 INTERVIEW

**Majid  
Barzegar**

- GRAVEYARD PLAYGROUND
- A WHALE OF A TIME
- THE IMPOSSIBILITY OF DEATH

p. 6

- PROUD TO BE BASQUE
- CONNECTING GENERATIONS
- ERSHADI MASTER CLASS

p. 7

ՄՈՍԿՎԱ ԿԻՆՈԹԱՏՐՈՆ, ԿԱՐՈՒՅՑ ԴԱՂԻՑ  
MOSCOW CINEMA, BLUE HALL **15.07**

10:00	<b>Մերո շիրու/</b> <i>նեմ.</i> ՝ Դավիդ Վերբեք <b>Full Contact</b> /dir. David Verbeek	Nld/Hrv, 105' FC	Lang.: English Subt.: Armenian
12:30	<b>Ամառը/</b> <i>նեմ.</i> ՝ Սեյեդ Հադի Մոհագեղ <b>Immortal</b> /dir. Seyed Hadi Mohaghegh	Iran, 90' FC	Lang.: Persian Subt.: English and Armenian
15:00	<b>Փակուղի/</b> <i>նեմ.</i> ՝ Հարություն Խաչատրյան <b>Deadlock</b> /dir. Harutyun Khachatryan	Arm, 94' «25»	Lang.: Armenian Subt.: English




17:00	<b>Բալերի անունները/</b> <i>նեմ.</i> ՝ Բրանկո Շմիդտ <b>Ungiven</b> /dir. Branko Schmidt	Hrv, 83' FC	Lang.: Croatian Subt.: English and Armenian
19:00	<b>Ամառը/</b> <i>նեմ.</i> ՝ Սեյեդ Հադի Մոհագեղ <b>Immortal</b> /dir. Seyed Hadi Mohaghegh	Iran, 90' FC	Lang.: Persian Subt.: English and Armenian
21:00	<b>Ամենատղթական քաղաքացի/</b> <i>նեմ.</i> ՝ Մաջիր Բարզեգար <b>A Very Ordinary Citizen</b> /dir. Majid Barzegar	Iran/Cze, 100' YP	Lang.: Persian Subt.: English and Armenian



ՄՈՍԿՎԱ ԿԻՆՈԹԱՏՐՈՆ, ԿԱՐՈՒՐ ԴԱՂԻՑ  
MOSCOW CINEMA, RED HALL

10:00	<b>Բարի լույս/</b> <i>նեմ.</i> ՝ Աննա Արևշատյան <b>Good Morning</b> /dir. Anna Arevshatyan	Arm, 104' AP	Lang.: Armenian Subt.: English
12:30	<b>Ռիթմ և ընդմիջումներ/</b> <i>նեմ.</i> ՝ Կոմս Շախբազյան <b>Rhythm &amp; Intervals</b> /dir. Comes Chahbazian <b>Ալուրա/</b> <i>նեմ.</i> ՝ Գոր Մարգարյան <b>Aurora</b> /dir. Gor Margaryan	Bel, 52' AP	Lang.: English/German/Armenian Subt.: English and Armenian
14:30	<b>Քաղցրավենիք/</b> <i>նեմ.</i> ՝ Ժոզեֆ Փիչիհադե <b>Sweets</b> /dir. Joseph Pitchhadze	Deu, 13' AP	Lang.: no dialogues Subt.: no subtitles
17:00	<b>Երկու Ռեմի, երկու/</b> <i>նեմ.</i> ՝ Պիեռ Լեոն <b>Two Remis, Two</b> /dir. Pierre Léon	Isr, 132' R	Lang.: Hebrew Subt.: English and Armenian
19:00	<b>Միտր մասին/</b> <i>նեմ.</i> ՝ Աննա Մելիկյան <b>About Love</b> /dir. Anna Melikian	Fra, 66' FNC	Lang.: French Subt.: English and Armenian
21:30	<b>Քամու հուշեր/</b> <i>նեմ.</i> ՝ Օզան Ալպեր <b>Memories of the Wind</b> /dir. Ozcan Alper	Rus, 115' AP	Lang.: Russian Subt.: English and Armenian



ՄՈՍԿՎԱ ԿԻՆՈԹԱՏՐՈՆ, ՓՈՔՐ ԴԱՂԻՑ 1  
MOSCOW CINEMA, SMALL HALL 1

10:00	<b>Քարոնի մյուս կյանքը/</b> <i>նեմ.</i> ՝ Յոանա Յուրկան <b>The Other Life Charon</b> /dir. Ioana Turcan	Rom/USA, 40' DC	Lang.: Romanian Subt.: English and Armenian
12:30	<b>Արշիպելագ/</b> <i>նեմ.</i> ՝ Բենժամին Յուգե <b>The Archipelago</b> /dir. Benjamin Huguet	UK, 41' DC	Lang.: Faroese/English Subt.: English and Armenian

12:00	<b>Homo Sapiens/</b> <i>նեմ.</i> ՝ Նիկոլաս Գայրհալթեր <b>Homo Sapiens</b> /dir. Nikolaus Geyrhalter	Aut/Deu/Che, 94' DC	Lang.: no dialogues Subt.: no subtitles
14:00	<b>Քենեդիի տուն է վերադառնում/</b> <i>նեմ.</i> ՝ <b>Kenedi Goes Back Home</b> /dir. Željimir Žilnik	Srb, 75' R	Lang.: Serbian/Romanian/German Subt.: English and Armenian
16:00	<b>Քարոնի մյուս կյանքը/</b> <i>նեմ.</i> ՝ Յոանա Յուրկան <b>The Other Life Charon</b> /dir. Ioana Turcan	Srb, 26' R	Lang.: Serbian/Romanian/German Subt.: English and Armenian
18:00	<b>Արշիպելագ/</b> <i>նեմ.</i> ՝ Բենժամին Յուգե <b>The Archipelago</b> /dir. Benjamin Huguet	UK, 41' DC	Lang.: Faroese/English Subt.: English and Armenian
20:00	<b>Քարոնի մյուս կյանքը/</b> <i>նեմ.</i> ՝ Յոանա Յուրկան <b>The Other Life Charon</b> /dir. Ioana Turcan	Rom/USA, 40' DC	Lang.: Romanian Subt.: English and Armenian



18:00	<b>Մահացու ցաղկ/</b> <i>նեմ.</i> ՝ Բորիսլավ Կոլև <b>Saito Mortale</b> /dir. Borislav Kolev	Bgr, 80' DC	Lang.: Bulgarian Subt.: English and Armenian
20:00	<b>Տան մյուս կողմը/</b> <i>նեմ.</i> ՝ Նարե Մկրտչյան <b>The Other Side of Home</b> /dir. Naré Mkrtchyan	USA, 40' AP	Lang.: English/Armenian/Turkish Subt.: English and Armenian
21:30	<b>Րադիոընկալիչ/</b> <i>նեմ.</i> ՝ Լուսինե Պապոյան <b>Radioreceiver</b> /dir. Lusine Papoyan	Arm, 18' AP	Lang.: Armenian Subt.: English
21:30	<b>Մարման լռությունը/</b> <i>նեմ.</i> ՝ Վիկեն Արմենյան <b>Leopard's Silence</b> /dir. Viken Armenian	Fra, 42' AP	Lang.: French Subt.: English and Armenian

ՄՈՍԿՎԱ ԿԻՆՈԹԱՏՐՈՆ, ՓՈՔՐ ԴԱՂԻՑ 2  
MOSCOW CINEMA, SMALL HALL 2

13:00	<b>Բասկական գնդակ II/</b> <i>նեմ.</i> ՝ Յուրգեն Լեթ, Օլազ Գոնսալես Աբրիսկետա <b>Pelota II</b> /dir. Jørgen Leth, Olatz González Abrisketa	Esp, 71' BNC	Lang.: Basque/Spanish/English Subt.: English and Armenian
15:00	<b>Դրախտում/</b> <i>նեմ.</i> ՝ Սուսանե Բիեր <b>In a Better World</b> /dir. Susanne Bier	Dnk, 113' DNC	Lang.: Danish/English/Swedish Subt.: English and Armenian
17:30	<b>Ռոմեո և Ջուլիետ/</b> <i>նեմ.</i> ՝ Ֆրանկո Չեֆիրելլի <b>Romeo and Juliet</b> /dir. Franco Zeffirelli	UK/Ita, 138' SH	Lang.: English Subt.: Armenian
20:00	<b>Համլետ/</b> <i>նեմ.</i> ՝ Լորենս Օլիվեր <b>Hamlet</b> /dir. Laurence Olivier	UK, 161' SH	Lang.: English Subt.: Armenian

ՄԻՆԵՄԱ ՍՕՍԻՐ  
CINEMA STAR

18:00	<b>Աննա/</b> <i>նեմ.</i> ՝ ժակ Տուլեմոնդ <b>Anna</b> /dir. Jacques Toulemonde	Fra/Col, 96' FNC	Lang.: French/Spanish Subt.: English and Armenian
20:00	<b>Բուլլիթ/</b> <i>նեմ.</i> ՝ Փիթեր Յեյթս <b>Bullitt</b> /dir. Peter Yates	USA, 114' R	Lang.: English Subt.: Armenian

ԿԻՆՈՊԱՐԿ  
KINOPARK

18:30	<b>24 շաբաթ/</b> <i>նեմ.</i> ՝ Աննե Ջոհրա Բերաչեդ <b>24 Weeks</b> /dir. Anne Zohra Berrached	Deu, 102' GFD	Lang.: German Subt.: English and Armenian
21:00	<b>Հրակալ ծովը/</b> <i>նեմ.</i> ՝ Գիանֆրանկո Րոզի <b>Fire at Sea</b> /dir. Gianfranco Rosi	Ita/Fra, 108' YP	Lang.: Italian Subt.: English and Armenian

ԷՆԵՐԿ ՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԻՆՈԴԵՐԱՍԱՆԻ ԹԱՏՐՈՆ  
HENRIK MALYAN THEATRE OF CINEMA ARTISTS

13:00	<b>Ո՛վ կտորեց հայերին/</b> <i>նեմ.</i> ՝ Մոհամեդ Հանաֆի Նասր <b>Who Killed the Armenians?</b> /dir. Mohamed Hanafy Nasr	Egy, 73' FV	Lang.: Arabic Subt.: English
14:30	<b>Ուղևորություն Անատոլիայում/</b> <i>նեմ.</i> ՝ Բեռնարդ Մանգիանտե <b>Journey in Anatolia</b> /dir. Bernard Mangiante	Fra, 60' FV	Lang.: Armenian/Turkish/French/Deutsh/Russian/English Subt.: English
15:30	<b>Արյան հիշողություն/</b> <i>նեմ.</i> ՝ Բագրատ Գրիգորյան <b>Blood Memory</b> /dir. Bagrat Grigoryan	Arm, 18' FV	Lang.: Armenian Subt.: no subtitles



ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳԻՇԵՐՆԵՐ ԴՈՐՈՒՅԱՆ ԱՅՓԻՆԵՐՈՒՄ  
YEREVAN NIGHTS AT POGHOSYAN GARDENS

21:00	<b>Փոթորիկ/</b> <i>նեմ.</i> ՝ Դերեկ Ջարման <b>The Tempest</b> /dir. Derek Jarman	UK, 92' SH	Lang.: English Subt.: Armenian
-------	---	---------------	-----------------------------------

GOLDEN APRICOT DAILY

Խմբագիրներ՝ Յուս Բրուերեն, Արթուր Վարդիկյան  
Աշխատակազմ՝ Մարինե Նյուդորֆ, Հուգո Էմերզալ  
Հեղինակներ՝ Կարեն Ավետիսյան, Արմինե Բախչինյան, Ռոզա Գրիգորյան, Սեդ Կիրակոսյան, Բաֆֆի Մովսիսյան  
Լուսանկարիչ՝ Մանե Հովհաննիսյան

Սրբագրիչ՝ Մարինե Վարդիկյան  
Թարգմանիչներ՝ Կարինե Արյան, Զարուհի Սաֆարյան  
Գիգայներ՝ Գայանե Գրիգորյան  
Հեռակա խորհրդատու՝ Պիտեր վան Բյուերեն  
Տպագրված է «ՆՏ Հորիզոն» ՍՊԸ-ում

Editors: Joost Broeren & Artur Vardikyan  
Staff: Maricke Nieuwdorp, Hugo Emmerzael  
Contributors: Karen Avetisyan, Artsvi Bakhchinyan, Roza Grigoryan

Photographer: Mane Hovhannissyan  
Design: Gayane Grigoryan  
Backstage General Adviser: Peter van Bueren  
Printer: "NT Holding" Ltd.

# ՀՊԱՐՏ ԲԱՍԿԸ


«Ամանա» ֆիլմով բասկ ռեժիսոր Ասիեր Ալտունան ստեղծել է առականման տարրերով իրապաշտական դրամա մի գյուղական պատկերավոր ընտանիքի մասին: Բասկերի գյուղերի բնակչության նվազումը ու աճող տարակարծությունը ծողղների և երեսներին միջև ֆիլմի գլխավոր թեմաներից են: «Բասկական գյուղատնտեսության մեջ այսօր ձգնաճամ է՝ բոլոր երիտասարդները տեղափոխվում են քաղաք աշխատելու»:

Բասկերի երկիրը՝ Հյուսիսային Իսպանիա՝ ինքնավար մարզը, գեղեցիկ ֆոն է ծառայում բասկ գրող Քիլոնի Ուրիբեյի բանաստեղծությունից վերջնական Ալտունայի դրամայի համար: Այս բանաստեղծությունը նկարագրում է հողագործի և քաղաք տեղափոխվող նրա դստեր բախումը: Ալտունան ասում է. «Ավանդապահ, կոպիտ ու բոնի մարդը և ազատ ու համարձակ դստեր հալոցումն այս տարրերի պատճառները խորպես հուզեց ինձ: Այն շատ բան է ասում մեր ազգի մասին: Ես ինքս էլ ծնվել եմ բասկական գյուղում,

այնպես որ փնտրում էի մի ազարակ, որ ունենար նույն մրցողությունը, որ հիշում էի մանկությունիցս»: Ալտունան, սակայն, չէր ուզում, որ ֆիլմը վերածվի իր անցյալի վերստեղծման, այնպես որ ընտրեց երիտասարդ մի կնոջ, որպես կենտրոնական կերպար: «Ճիշտ՝ ինչպես բանաստեղծության մեջ»:

Ալտունան իրեն արտոնյալ է գտնում, բանի որ կարող է ֆիլմեր ստեղծել թե իսպաներեն և թե բասկերեն: Եվ առավելա, որովհետև շատ քիչ մարդիկ են մնացել, ովքեր խոսում են բասկերի լեզվով: «Ես ինձ Բասկերի երկրի քաղաքացի եմ համարում: Մեծացել եմ բասկերի ընտանիքում, սովորել եմ այնտեղ, և հպարտ եմ, որ այդտեղից եմ»: Բայց նրա ֆիլմը արտացոլում է այն, ինչ կատարվում է իրական կյանքում. «Բոլոր երիտասարդները տեղափոխվում են քաղաք աշխատելու»:

Դեռ տասը տարի առաջ նույն բանը կատարվում էր բասկ կինոգործիչների հետ: «Այնպես տառցային, որ բասկական կինոյի մեծամասն վարպետները, ինչպիսիք են Իմանուել Ուրիբեյն, Խոսյո Մեդանը աշխատեցին Մադրիդում: Երբ սերունդը մնում է ֆիլմեր նկարահանելու Բասկերի երկրում, թեև դա անկողի համար շատ քիչ գումարներ կան: Չկա մեծ հեռու-



տարնները, կոնդեցիոն կատարելություններ պատվիրելու և կինոարդյունաբերությանն աջակցելու համար, բայց դա բոլորակալ օրինություն կա-

# ԿԱՊԵԼՈՎ ՄԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ

«Բայերի անունները» ֆիլմով խորվաթ ռեժիսոր Բրանկո Շմիդտը ստեղծել է դրամա մի տարեց զույգի մասին, որը փորձում է հաղթահարել իրենց հարաբերությունների ձգնաճամը: Ծմիդտը իրավիճակ է հանդիսատեսին՝ հետևել նրանց վարքագծին ու զգացմունքային մետամորֆոզներին տարվա չորս եղանակների ընթացքում:

Ծմիդտը 1981-ից սկսած ֆիլմեր է անում՝ սկսելով մի դարաշրջանում, որը կարող զգալ էր կինոգործիչների երկու սերունդների միջև: «Մի օտարերկրյա կինոընթացակարգ, ով դիտում էր իմ բոլոր ֆիլմերն ու գիրք էր գրել իմ մասին միակ գիրքը խորվաթական կինոյի մասին, որի հեղինակը օտարերկրացի է: Նա ինձ բնութագրել է որպես կապող զույգ խորվաթ կինոգործիչների երեք սերունդների միջև, ինչն ինքնին մեծ հանդիսատեսություն էր ինձ համար: Ես սկսել եմ իմ գործունեությունը 50-ականների ու 60-ականների մեծ վարպետների ազդեցության տակ, բայց իմ բախող մաս բերել է, որ ես շարունակել եմ իմ աշխատանքը բվային դարաշրջանում»:

Երբ մենք մտածում ենք նախկին հարավսլավական երկրների կինոյի մասին, մենք հաճախ քաղաքական կամ պատերազմական թեմաներով ֆիլմեր ենք պատկերացնում: «Սա ար-

սափեի կարծրատիպ է. մենք մաս իրաշարի կատակերգություններ ու սոցիալական դրամաներ ունենք: Թերևս այս կարծրատիպը անվում է այն փաստից, որ մեր աշխարհառջակ ֆիլմերից շատերն այդ թեմաներով են, բայց դա ընդհանուր միտում չէ»,- ասում է Շմիդտը:

«Բայերի անունները» ֆիլմով Շմիդտը դարձել է այն սակավաթիվ ռեժիսորներից մեկը, ով ուշադրության կենտրոնում տարեց երկրամերն են: «Բայերի անունները»-ից բացի՝ ֆիլմի սցենարիստն ու նաև նաև 6-ամյա աղջկա մասին մի սցենար ենք մշակում: Տարեց մարդիկ ու երեխաներն այդքան հաճախ չեն դառնում ֆիլմերի հերոսներ: Գուցե հենց դա է պատճառը, որ այս ֆիլմերն այդքան մեծ հաջողություն չեն ունենում, որքան չափափասների մասին ֆիլմերը, որտեղ նրանք սերտվում կամ դրա մասն որևէ այլ բանով են զբաղվում: Նաև թե երեխաների, թե տարեց մարդկանց հետ աշխատելը շատ դժվար է: Եթե դու միայն ընտրություն ես կատարում, ոչ ոք չի կարող օգնել քեզ, նույնիսկ Աստված»:

Մեկ այլ նոր ֆիլմ, որում կարելի է հետևել տարեց զույգի հարաբերություններին, Միլոսաև Տանկելի «Մերն» է, որը թե՛ «Ուկրաինա արմավենի», թե՛ «Օսկար» է շահել որպես լավագույն օտարերկրյա ֆիլմ: Բայց Շմիդտը բոլորովին չի կաշկամվում Տանկելի սահմանափակ բարձր չափորոշիչից: «Մերն» անվանակալ



փայլուն ֆիլմ է, բայց ես այն տեսել եմ իմ «Բայերի անունները» ֆիլմն ավարտելուց հետո: Պատճառը շատ դեպքեր են հայտնի, երբ գյուտարարները միաժամանակ նույն բանը վրա են աշխատել՝ ստանց մեկը մյուսի մասին իմանալու: Բացի դրանից՝ մենք տարբեր մտղեցումներ ենք կիրառել: Օրինակ Տանկելի տեսակետիցը ստատիկ է, միջոցառ ես ֆիլմը նկարել եմ ձեռքից: «Բայերի անունները» ֆիլմի գործողությունները կատարվում են չորս եղանակների ընթացքում, ինչը տարածված համեմատություն է կինոարվեստների ուսանողների համար: Ծմիդտը որևէ խորհուրդ ունի երիտասարդ ռեժիսորներին, որոնց աղջկա այս նույն խնդիրն է դրված: «Թող սպորեն Տանկելն, ը-ծիծաղելով ասում է նա: Եթե թախտը չտրելի, չորս եղանակով ֆիլմ չես կարող նկարահանել»: ԿԸ

## Վարպետաց դաս

15:00, ՀԲԸՄ կենտրոն (Մելիք-Աղայան 2/1): Գառը կվարի ռուս լրագրող Անդրեյ Լոշակը՝ HTB հեռուստատեսության «Մասնագիտությունը» լրագրող՝ հարցազրույցի հեղինակ, «ՏԵՖԻ» հեռուստատեսային մրցանակի դափնեկիր: Հենց Լոշակն էր հեղինակ վաղաժամ կայացած «Ալթորա» մրցանակաբաշխության հավակնորդների մասին կարճամետրաժ ֆիլմերը:

## Ֆրանսիական նոր կինո

17:00 «Մուսկլ» կ/թ Կարմիր դահլիճում պաշտոնապես կնկարվի «Ֆրանսիական նոր կինո» ծրագիրը, որի մեջ ընդգրկված 3 թարմ ֆրանսիական ֆիլմերի մասին կարող եք ընթերցել 4-րդ օրվա համարում: Կցուցադրվի ռեժիսոր և այս տարվա Խաղաղության մրցույթի ժյուրիի անդամ Պիեռ Լեռնի «Երկու Ռեմի, երկու» կատակերգությունը:

## Երևանյան գիշերներ

Կրկին Ենթադիմ էր քայ երկնի տակ: Դիտելը անգլիացի ռեժիսոր Դերեք Ջարմենի «Փորոտիկը» 21:00 Պողոսյան պահեստում:

# Մի գաղթականի դրամա

«Փակուղի» (Չարություն Խաչատրյան, Չարություն, 2016), «Չայ կինո. նոր ժամանակներ», 15.07՝ 15:00, «Մուսկլ» կ/թ Կապույտ դահլիճ

Հայաստանում ընտանիքի հետ համերաշխ պարող մարդը բարեկեցիկ ապագայի հույսով մեկնում է ԱՄՆ: Այսպիսի պատմությունները վերջին երկու տասնամյակում սովորական են դարձել Հայաստանում: Սակայն այն, ինչ պատահում է Չարություն Խաչատրյանի «Փակուղի» վավերագրության (2016թ.) հերոսին Լևոնին, Ամերիկայում հայտնվելուց հետո, իրական դրամա է: «Փակուղին» Չարություն Խաչատրյանի «Անվերջ կյանք» հավերժ վերադարձ» ֆիլմաշարի նոր կինոկարգ է, հերոսն էլ 1989թ. նկարահանված «Քամին ունայնություն» ֆիլմից է: 1996թ. ԱՄՆ արտագաղթած Լևոնի ընտանիքն աստիճանաբար փոխվում է, ու մի պահ այն դառնում է ամերիկացիական հայաստանցիների ընդհանրական կերպար: Ֆիլմի օրգանականությամբ նկարագրվում է նաև օպերատորի ու մոնտաժողի հմուտ աշխատանքի արդյունքը: Հեղինակին, ինչպես, հետաքրքրում է մասնավորապես Լևոնի՝ ժամանակի ինչ-որ կետում անշարժացած կյանքը, սակայն ֆիլմում խոսվում է ցույց է տրվում նաև ըն-



տանիքի մյուս անդամների մասին, որոնք երջանիկ են իրենց գտնում ամերիկյան հասարակության մեջ և լրել են հորը չհասկանալով նրա սարսույները: Չարություն Խաչատրյանը, համասցենարիստ Միքայել Ստամբոյանի հետ, կարողացել է Լևոնի միօրինակ աշխատավայրը դարձնել կինեմատոգրաֆիկ տարածություն. գործածության համար ոչ պիտանի «մեքենաների գեղեցիկ մանողը» ցույց է տրվում ֆիլմի ամբողջ ընթացքում: Սա հերոսի բնական միջավայրն է, բայց այն ասոցացվում է «Ամերիկյան երազանքի» հետքերով գնացած Լևոնի

կյանքի հետ. պիտանի մասերի գաղտնի և մետաղական անպետք մնացորդի ճզմում: Մրան գոմարվում է Լևոնի անվերժ խոսակցությունը ռեժիսորի հետ և տպավորությունն ամբողջաճամ է. նա հայտնվել է ճզմված մետաղի ջարդոնի կարգավիճակում և չի կարողանում նույնիսկ բացատրել, թե ինչու իր հարս մեռած այդ միջավայրից չի վերադառնում Հայաստան: Ռեժիսորին հաջողվել է տարիներ շարունակ նկարահանել ոչ միայն Լևոնի կյանքի ու տարրավայրի փոփոխությունները, այլև նրա հոգին, ներառյալ որդեկան լիբանանցի փաստ: ՍԿ

Երեկ ՋԲԸՄ կենտրոնի դահլիճում վարպետաց դաս անցկացրեց իրանցի դերասան Դոնայտ Էրշահին: Իրանցի դերասանը, ով մի ժամանակ ճարտարապետ էր, հայտնի դարձավ Աբաս Քիառուշամիի «Ոսկե արմավենու» դափնեկիր «Քայի համը» (1997) ֆիլմում գլխավոր դեր կատարելուց հետո: Նա ոչ միայն այս տարվա խաղաղության մրցույթի ժյուրիի անդամ է, այլև կատարում է «Չայկական համալսարանական» ընդգրկված «Վերջին բնակիչը» ֆիլմի գլխավոր դերերից: «Ես հուզված եմ՝ լինելով մի վայրում, որտեղ եղել է իմ մեծագույն վարպետը՝ Քիառուշամին: Կինոն լայն ապարթեզ է: Ամեն ինչ պետք է հիմքից սկսել, իսկ կինոներ են պետք, անհորժեշտ է ծանոթ լինել արվեստին: Ես ճարտարապետության և կինոյի միջև նմանություն եմ տեսնում. երկու դեպքում էլ գործ ունենեք տարածության և լույսի հետ»: ՌԳ





# Գիշեր և ցերեկ

«Չրավառ ծովը» (Ջանֆրանկո Ռոզին, Իտալիա/ Ֆրանսիա, 2016) Երևանյան պրեմիերա, 15.07՝ 21:00, Կինոպարկ

Ջանֆրանկո Ռոզին իր «Չրավառ ծովը» ֆիլմը նկարահանել է մի քանի ամսում՝ Լամպեդուզա իտալական կղզում: Այս Միջերկրական կղզին վերջին տարիներին լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում է, քանի որ աֆրիկյան ու Միջին Արևելքի երկրներից երկուսն արտագաղթող հազարավոր փախստականներ ենք այստեղ են ժամանում: Վերագրում արտացոլված այրվող ցրի հակասական պատկերը, որը վերցված է ֆիլմում պատմվող Երկրորդ աշխարհամարտի պատմությունից, խորհրդանշում է փախստականների այժմյան ճգնաժամը Եվրոպայի հարավային ափամասերին: Ֆիլմն ինքնին հիմնված է մեկ այլ հակադրության վրա՝ գիշերվա ու ցերեկվա:

Գիշերային տեսարաններում տեսնում ենք, թե ինչպես են ցրանք փրկում նավակներից, որոնք տասնյակ կամ հարյուրավոր կիսաքաղց ու ջրազրկված մարդկանց են տեղափոխում: Տեսնում

ենք փրկարարական գործողությունները, որոնց ժամանակ առաջին արձագանքման աշխատակիցները դիմակներով են ու պաշտպանիչ համազգեստներով, որպեսզի պաշտպանեն իրենց այն հիվանդություններից ու վնասվածքներից, որոնք վստում են նավերի վրա: Տեսնում ենք՝ ինչպես են փախստականներին գրանցում, լուսանկարում ու բուժվում անցկացնում: Տեղեր Լամպեդուզան շատ ավելի անխտով վայր է: Գիշերային սարսափները հեռու են բոլոր այս փոքր անկեղծ դաս կղզուց, որտեղ հիմնական գրադոմերը ձկնորսությունն է: Տեսնում ենք 12 տարեկան Սեմուելի կասոյան Լամպեդուզայում: Նա թափառում է նավահանգստում՝ որսի գնում, կրակում իր պարաստիկով, գնում ծով իր ձկնորս հոր հետ ու դժկամությամբ անում իր անգլերենի տեղային աշխատանքը:

Ռոզին առանց կաշխատողի միջամտում է այն աշխարհին, որը պատկերում է: Ամենաակնհայտ օրինակը թերևս Fuocoammare եղան է, որից էլ ենք ֆիլմն ստացել է իր օրիգինալ իտալերեն վերնագիրը: Մի տեսարանում Սեմուելի տատիկը գանգահարում է տեղի ռադիոկայան, որպեսզի այդ եր-

գուր պատվիրի նվիրելով այն կղզու ձկնորսներին: Չնայած պետ է հշել, որ երգը հատուկ այդ ֆիլմի համար երգահան Ջուզեպե Ֆրագապանն էր գրել: Ֆիլմը նաև նկարահանման հատուկ ոճ ունի, որը ժամանակ առ ժամանակ ավելի շատ խաղաղ-կային ֆիլմ է հիշեցնում, քան վավերագրական:

Բայց այդ խաղաղային կամ խաղաղայինի նման տարրերը միայն փախստականների իրական դրաման ու Սեմուելի չհին թվացող խնդիրները վերահանում համար են: Այդքան շատ ժամանակ ծախվելով 12-ամյա տղայի միապաղաղ հոգսերի վրա՝ Ռոզին ցուցադրում է այն, թե ինչ ենք անում մենք՝ բավական փախստականների ճգնաժամին՝ թերթում ենք: Փախստականների ճգնաժամը նկազեցնելով ու պարփակելով չորուցամար թվերի շրջանակում՝ մենք դրամով իսկ անտեսում ենք փախստականների մարդկային բնույթը, նախընտրելով տեսնել ցրանք որպես խումբ, այլ ոչ թե անհատ: Բայց քանի որ մենք ճանաչում ենք Սեմուելին ու նրա ընտանիքը, նրա ընկերու աչքերը նույնքան մեծ ազդեցություն են թողնում, որքան իրավաբան ծովը: **ՅԲ**

## Գերեզմանի խաղաղարարակը

«Քարոնի մյուս կյանքը» (Յոնաս Ցուրկան, Ռուսիա/ ԱՄՆ, 2015), Վավերագրական մրցույթ, 15.07՝ 10:00, 16:00, «Մուսկլա» կ/թ Փոքր դահլիճ 1

Ռուսիայից կինոգործիչ Յոնաս Ցուրկանը դեռ վաղուց է զգացել իր երկրի մեկուսացված համայնքները մարդկայնացող ֆիլմ նկարելու կարիքը: Նա ուզում էր գեղեցիկից ցույց տալ ոչ թե հայտնի կարծրատիպերով, այլ մարդկային ղեկը տալ նրանց: Նրա նավարկումն ուսանողն անում է դա հանգիստ, հետևողական «Քարոնի մյուս կյանքը»: Ֆիլմում Նարցարույցներ չի անում, ոչ էլ մեկնաբանում կամ չարաբանում է այն իրավիճակները, որ ցուցադրում է: Ցուրկանը խցիկը շարժում է դադող կամ պահում է մի կետի վրա, որպեսզի ժամանակ ունենան խորանալու բազմաթիվ պատկերների մեջ:

Ցուրկանը իր խցիկը տեղադրում է փոքրիկ քաղաքի գերեզմանոցում, որտեղ չորս գնչու տղամտղ օր ու գիշեր գերեզմաններ են մտնում՝ երբեմն սրահ, երբեմն ոչ պահում: Չնայ, ու անվախ օրի են լսում, որ տարանան: Չարաբանից կարծիքներն ու մտայն միշտ գործ երկինքը նրանց կյանքի բարդ պայմանների ազդանշաններ են: Ընտանիքների հետ ապրում են գերեզմանից եզրին՝ երբեմն այս տխուր վայրը վերածելով երկնային խաղաղարարակի: Երեխաները կշարավ վազում են շրիմների շուրջ և կրճիտ են խնդրում ազատը համարադրելից: Երբեմն հաջողվում է, բայց երբեմն էլ բավական են ատելությանը: «Նապաստակների պես բազմաթիվ են, մորթում են մի տիկին: Ես եկել եմ հանգուցյալներին այցելելու, ոչ թե նրանց կերակրելու»:

Բայց կա նաև նրանց գոյության մյուս կողմը: Այնպես էր, որ կյանքում իրենց համար անմասնակց կարգադրում են: Սրա ապացույց մի գեղեցիկ տեսարան է, որտեղ մանուկը թափառում է տան մեջ, իսկ բնառանգի մեծահասակներն էլ սրտե տրախանում են: Նմանապես երբ տղամարդիկ փորում են քարի պես սիմոն հողը, իրենք բնառանգները հավաքում են ընդմիջմամբ վայելելով միջուկ ցերեկայինությունը: Գեթ մեկ ակնբարձրով հասարակության կողմից արհամարհված ինքնը հեռու է բոլորում: **ՄՆ**

## Մեռնելու անհնարիցությունը

«Ամսահը» (Սեյդա Չադի Մոհադեզ, Իրան, 2015), Խաղաղային մրցույթ, 15.07՝ 12:30 և 19:00, «Մուսկլա» կ/թ Կապույտ դահլիճ

Իրանցի ռեժիսոր Սեյդա Չադի Մոհադեզի «Ամսահը» կինոդրաման վավերագրական անդրադարձում ներկայացնում է կյանքի դժգոհ երևույթներից հիվանդի և խնամողի հարաբերությունները, ինչպես նաև մարդու ինքնապատճառման մոտիվները: Իր հարազատների մահվան պատճառ դարձած Այազի հոգեկան ու ֆիզիկական

տվայտանքներն ինքնապատճառման վերջ տալու բոլոր փորձերը ձայնագրում են թոսան Էբրահիմի ժամանակին կատարվող միջանոթությունների շնորհիվ: «Պակա չեն նաև դեռահաս թոսան տառապանքները, նա դիմում է ամեն գոհողության, որպեսզի չկորցնի և մեկ հարազատի, թեև կուզե վերջինս ոչ ոչ է միայն ֆիզիկապես: Էբրահիմն անգամ պատրաստ է ամուսնանալ իր պես դեռահաս Նարգեսի հետ, ինչը, ըստ գյուղացիական հավատալիքի, կարող է դրական տեղաշարժ բերել դժբախտ ընտանիքի կյանքում»:

Իրանական մեկուսացած գյուղի նախնական, հետամնաց վիճակը և խտաշունջ բնապատկերներն ասես հավելյալ կերպով կոչված են սրելու կինոկարի դրամատիզմը: Իրանական կիսատ-

նապատային իրականությունը, որը մասամբ ծաղու էր մեզ Աբաս Քարատաբայի «Բայի համը» կինոկարից (որը, ի դեպ, նույնպես ձայնագրվում է ինքնապատճառման մոտիվի շուրջը) հանդես է գալիս որպես գործող անձ: Տարբեր տեսանկյուններով պարբերաբար էկրանին հայտնվող միայնակ ծառի պատկերն ասես համահունչ է ֆիլմում իշխող միայնությունը, դատապարտվածությունը, դիմակայության թեմաներին: Առհասարակ, ֆիլմում երևացող որոշ արարկներ և երևույթներ նույնպես ռեժիսորի կողմից օգտագործվել են որպես դրամայի տեսողական, «ակտիվ» գործոններ (հանգուցյալ կոճ)՝ մագնիտոֆոնից հնչող ձայնը, բարձր մեջ պահված նրա կյանքը, Նարգեսի ասեղնագործ կտորը և այլն: **ԱԲ**

## Քավարանի և դրախտի միջև

«Քամու հուշեր» (Օզգան Ալիբեր, Ռուսիա/ Գերմանիա/ Ֆրանսիա/ Կրասնայ, 2016), Երևանյան պրեմիերա, 15.07՝ 21:30, «Մուսկլա» կ/թ Կարմիր դահլիճ



Թուրք ռեժիսոր Օզգան Ալիբերն առաջին անգամ չէ, որ ֆիլմ է ներկայացնում «Ոսկե ծիրան»: «Դեբյուտային» «Աշունը» 2009-ին արժանացել էր և Ժյուրիի հատուկ մրցանակին, և Ֆեդրատիոն մրցանակին, իսկ 2012-ին «Ապագան ձգվում է հավերժ» ֆիլմն ընդգրկված էր Խաղաղային մրցույթում: Վերջին «Քամու հուշերը» ֆիլմում գործողությունները տեղի են ունենում Երկրորդ աշխարհամարտի ժամանակ: Աբասը (Օնուր Սայաթ) լրագրող է, նկարիչ և պոետ, ում սպանում են իսրայելական իշխանությունները տվեառառտ հողվածների համար: Փայլելով Մասմուդայի հայտնվում է Թուրքիայի և Խորհրդային Կրասնայի սահմանի գտնվող մի գյուղում: Այժմ նա բնութագրվում է ասպի, մինչև կարծիքը նշան տան, որ անցումն անվտանգ է: Անցումն է ևս օրեր, շարաթեր, ամուսնի անհրաժեշտ Աբասը դեռ սպասում է ասես քավարանի և դրախտի միջև: «Քամու հուշերը» նկարահանել է Թեո Անգրեդուտի վերջին ֆիլմերի նշանավոր նույն օպերատոր Անդրես Սինիստրայի: Այստեղ նա նույնպես էլ ցույց է դնում անհեղին բնապատկերները նկարելու իր տաղանդը: Աբասն ասես կորչում է այս երեքուր մեզ կանաչի մեջ: Անհայտ վայրը հեռագիտես զրպակում է նրան: Երբ է գնալու: Գնալու է արդյոք: Արժեք գնալ: Ի վերջու անտեսող «ցնցում է» նրան այս հարցերի վերա: **ԱՎ**

## Ընդունել նորը՝ հարգելով հինը

«Արշիպելագ» (Բենժամեն Յուզե, Մեծ Բրիտանիա, 2016) Վավերագրական մրցույթ, 15.07՝ 10:00, 16:00, «Մուսկլա» կ/թ Փոքր դահլիճ 1

Հոգնելով սպանություն, թե երբ է Google Streetview հավելվածը քարտեզագրելու իրենց կողմից արժեք Ֆարերյան կղզիների բնակիչները, տեսախցիկները նշխարների վրա ամբարձրելով, փորձում են անել այդ գործը: Գեղեցիկ բառախաղով նրանք իրենց նախագիծն անվանում են Sheepview: Հին մեթոդների ու նոր տեխնոլոգիայի միջև այս անտուրի հարաբերությունները շատ դիպուկ են բնութագրում Դամիանի մի մասը կազմող այս հետախույզ կողմերին: Դա նաև «Արշիպելագ» ֆիլմի թեման է:

Բայց նշխարները «Արշիպելագում» փոքր դեր են կատարում, քանի որ ռեժիսոր Բենժամեն Յուզեն ֆիլմի համար ավելի զգայուն թեման է գտել թանկարժեք միս ունեցող կետերի որսը: Այս դժգոհ տեսարանում Յուզեն ցույց է տալիս, թե ինչպես է Ֆարերի կետերը որսում գեղատեսիլ կղզու ափերին: Խցիկն ընդամենը մի սանտիմետր հեռավորության վրա է, երբ արյունը սկսում է հորդալ, ու մարդիկ իրենց որսն են բերում:



Յուզեն երբեք իր հերոսներին չի դատում: Իրականում նա ցույց է տալիս, որ կղզիավորների բնակիչները շատ գիտակից հարաբերություններ ունեն բնության հետ: Մեղադրողները ուրիշներն են, այլ ոչ թե ռեժիսորը: Sea Shepherd միջազգային ՀԿ-ն նկատում է կետերի որսը ու մի խումբ կամավորականներով կղզի գալիս, որպեսզի ճնշում գործադրի Ֆարերի վրա: Կամավորականները երբեք չեն խոսում ֆիլմի նկարահանող խմբի հետ, բայց նրանց ներկայությունը հետաքրքիր պատկեր է ստեղծում՝ ծովախեցքների նման ևս հազուադեպ ու դժգոհներով նրանք ներկայացնում են ժամանակակից աշխարհի, որը հակադրվում է կղզու բնակիչների ավանդական տեսակետներին: Ճիշտ այնպես, ինչպես Sheepview-ի դեպքում՝ նրանք էլ պետք է նորն ընդունելու ձև գտնեն՝ միաժամանակ հարգելով հինը: Բայց գուցե այս դեպքում բառախաղը արդեն բավարար չէ: **ՀԷ**

## Բարդ որոշում

«Բարի լույս» (Աննա Արևշատյան, Հայաստան, 2016), Հայկական համայնապատկեր, 15.07՝ 10:00, «Մուսկլա» կ/թ Կարմիր դահլիճ

«Բարի լույս» Աննա Արևշատյանի դեբյուտային ֆիլմն է: 13-րդ «Ոսկե ծիրանի» շրջանակներում էլ տեղի կունենա ֆիլմի շնորհանդեսը, այն ընդգրկված է «Հայկական համայնապատկեր» անվանաբանում: Սոցիալական դրամայի ժանրում նկարահանված խաղաղային ֆիլմերն արդի հայկական կինոարտադրության մեջ մատերի վրա կարելի է հաշվել: Այդօրինակ ֆիլմերը պահանջարկ չունեն: Աննա Արևշատյանը ֆիլմը կառուցել է սոցիալական դրամայի դասական կանոններով և գլխավոր դերակատարներին համար անգամ ընտրում է պրոֆեսիոնալ դերասաններ:

Հեղուր մեր օրերում ապրող հեռատարաբան Արևշատյան է, որը գրվել է աշխատանքից: Սոցիալական և կենցաղային խնդիրները, սկզբունքայինության պատճառով գործազուրկ դարձալը և կլքը միայն հայրենիքը լքելու մեջ տեսնելու հորդորները կրկին հասկանում են Արևշատյանը ֆիլմը կառուցել և վերաբերվել փակուղի: Որոշման մասին ծնողների հետ քննարկելու նպատակով Արևշատյանը նույնպես անտեղիք թեման ճանապարհը ֆիլմը վերածում է road-movie-ի, որում ապագայից հրեցուցած գործողությունները չեն, այլ մանկական իշխողություններն ու արեթնաման ճանաչվում են: **ԻՄ**

**Դուք ի սկզբանե մտադիր էիք եռապատում նկարահանել թեհրանյան տարբեր սերունդների մասին:**

Ոչ, սկզբում մտադիր էի իմ նախորդ երկու ֆիլմերն այս մեկով ամփոփել կամ ցույց տալ մարդու կյանքի տարբեր փուլերը: Միայն նկարահանումների ժամանակ հասկացա, որ դա վեր է ավելում եռապատում: Իմ առաջին ֆիլմի համար ես չէի ուզում աշխատել պրոֆեսիոնալ դերասանների հետ, այնպես որ որոշեցի ֆիլմ ստեղծել դերասանների մասին: Մենք նկարահանել ենք Թեհրանի հանրային թաղամասերից մեկում, որն ասես ավան լինի քաղաքի ներսում: Տեղի բնակիչները մեկը մյուսից մեկուսացված են ապրում: Այս մեկուսությունը միշտ հետաքրքրել է ինձ: Ինձ համար շատ հետաքրքիր է մարդկանց մտք կորելը ու այն, թե ինչպես են նրանք արձագանքում որոշակի սոցիալական իրավիճակներում:

**Պարոն Սաֆարիի ձեռնարկային թվային կոդը Ժամացույցի աշխատանք է հիշեցնում: Մի կարգում Գուրու նույնիսկ ցույց եք տալիս, թե ինչպես է նա շրջապատյալ կատարում մի կատուից շուրջ, որն ասես ցամաքը շատրվան լինի: Այս կարգում նա ասես կենդանի ժամացույց լինի: Գա ստիպում է մեզ մտածել Իրանում ժամանակի հասկացության մասին: Ժամանակն այնտեղ կանգ է առնում, թե չափից արագ է հոսում:**

Իրանը շատ ազմուտ ու մարդաշատ երկիր է: Միշտ կա արագություն ու քայքայություն, բայց նայելու մարդկանց հարաբերություններում միշտ ստանդարտ կա: Ֆիլմում մենք տեսնում ենք, որ Սաֆարին իր տանը ոչ մի աշխատող ժամացույց չունի, որովհետև նրան ժամացույց պետք չէ, ժամանակը նրա համար ոչ մի նշանակություն չունի: «Փարվիզում» դուք անընդհատ լսում եք գլխավոր հերոսի ձայրը: Այս ֆիլմում դուք լսում եք ձեռնարկային ձայրը: Ես շատ լուրջ եմ վերաբերվում իմ ֆիլմերում հնչող ձայններին: Երբեք երաժշտություն չեմ գործածում, ու շատ մեծ ուշադրություն եմ դարձնում, թե ինչ եք դուք լսում իմ ֆիլմերում՝ նաև կարիք դուրս:

**Ֆիլմում ոչ միայն ձեռնարկային ձայն է, այլև Սաֆարիի բնակարանի վրայով թռչող օդանավերի:**

Նա շատ մոտ է ապրում օդանավակայանին, բայց երբեք այնտեղ չի գնում: Նա նաև սովորությունից դրդված՝ ամեն օր գործի է դնում իր մեքենան, բայց երբեք չի վարում: Ամեն օր գնում է հաց ու տալիս մի մարդու, բայց մենք չգիտենք՝ ով է այն մարդը և ինչու է Սաֆարին նրան հաց տալիս: Նույնիսկ ես նրա մասին շատ բաներ չգիտեմ: Անա թե ինչու սա ինձ համար բավականին դժվար ֆիլմ էր: Ես խուսափել եմ ցանկացած անպատշաճ փոփոխությունից՝ միջին կամ լայն կադրերից մինչև խոշոր պլաններ: Ես չէի ուզում շեշտել որևէ բան, պարզապես ուզում էի այս մարդու կյանքում հանդիսատես լինել: Ուզում էի դիտողի դերում լինել, չէի ուզում ամեն ինչ իմանալ նրա մասին: Այցիայմերը շատ նման է հենց մահվան: Երբ ինչ-որ մեկը հիվանդանում է Այցիայմերով, նա ինչ-որ այլ աշխարհ է տեղափոխվում, ու դրանից ոչ ոք չի բուժվում, որպեսզի կարողանա պատմել մեզ, թե ինչ էր զգում, երբ տառապում էր այդ հիվանդությունից: Այնպես որ ես կարող էի դա միայն դրսից տեսնել ու ես փորձել եմ պատկերել այդ իրականությունն իմ ֆիլմում:

**Սցենարի համահեղինակ Փանահին Իրանում արգելել են ֆիլմ նկարահանել: Կապումե՞ք նրա Ձեր համագործակցության մասին:**

